

## Տեղեկություն

### <<Դպրոցական սնունդ >> ծրագրի վերաբերյալ

ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը 2013 թ. օգոստոսից համագործակցում է ՄԱԿ-ի Պարենային համաշխարհային ծրագրի /ՊՀԾ/ հայաստանյան գրասենյակի աջակցությամբ մարզի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների համար <<Դպրոցական սնունդ>> ծրագիրը իրականացնելու գործում:

Մարզի 80 դպրոցներում կատարվել են համապատասխան նախապատրաստական աշխատանքներ ծրագիրը իրականացնելու նպատակով:

71 դպրոցներում շաբաթական 5 օր երեխաներին կտրվի տաք սնունդ, իսկ 9 դպրոցներում, որտեղ տաք կերակուր պատրաստելու պայմաններ չկան, կտրվեն սննդարար միկրոտարրերով հարստացված մրգային ձողիկներ/չոր սնունդ/:

Կատարված աշխատանքի արդյունքում մարզի 62 դպրոցներում հոկտեմբերի 1-ից երեխաներին արդեն տրվում է սնունդ, մնացածում այն կտրվի նոյեմբերի 1-ից: